ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 17.12.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/110

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ Երևանի քաղաքապետարան
Բողոք բերող՝ «Նոբիլիս Գրուպ» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգ, Երևան քաղաքի ենթակայության մանկապարտեզների կարիքների համար կենտրոնացված կարգով սննդամթերքի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), քննության առնելով «Նոբիլիս Գրուպ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 30.11.2021թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>.**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին՝

1. դադարեցնել (վերացնել) 19.11.2021թ.-ի թիվ 5 արձանագրությամբ «Նոբիլիս Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժելու մասին որոշումը,

2. ընդունելու որոշում Ընկերության հայտը բավարար գնահատելու կամ շտկելու վերաբերյալ:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 30.11.2021թ.-ին:

Բողոքներ քննող անձի 01.12.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ բողոքը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/110 համարի ծածկագիրը:

07.12.2021թ.-ին և 17.12.2021թ.-ին նշանակվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 07.12.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 17.12.2021թ.-ին:

2. «Նոբիլիս Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Նոբիլիս Գրուպ» ՍՊԸ-ն 30.11.2021թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«1.1. Երևանի քաղաքապետարանը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 25.10.2021 թվականին հայտարարել է էլեկտրոնային աճուրդ թիվ «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/2» ծածկագրով (այսուհետ՝ էլեկտրոնային աճուրդ): Հիմք Պատվիրատուի կողմից թիվ «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/2» ծածկագրով 25.10.2021 թվականին հայտարարված էլեկտրոնային աճուրդը:

1.2. «ՆՈԲԻԼԻՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ (այսուհետ՝ Ընկերություն) ներկայացրել է էլեկտրոնային աճուրդին մասնակցելու հայտ:

1.3. Պատվիրատուն 15.11.2021 թվականին ծանուցել է Ընկերությանը ներկայացված հայտում առկա անհամապատասխանությունը այն է, Դուք դիմել եք ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/2 ծածկագրով էլեկտրոնային աճուրդին: Էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովը ուսումնասիրել է էլեկտրոնային աճուրդի մասնակցության Ձեր Դիմում-Հայտարարությունը, որում նկատվել են հետևյալ թերությունները. «ՆՈԲԻԼԻՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից 18-րդ չափաբաժնի մասով լրացված չէ առաջարկվող ապրանքի «ֆիրմային անվանումը»,

«ապրանքային նշանը» սյունակները, անհրաժեշտ է սյունակները լրացնել: Առաջարկում ենք գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում շտկել նշված անհամապատասխանությունները և ուղղված Դիմում-Հայտարարությունն ուղարկել համակարգի միջոցով: Հիմք՝ Պատվիրատուի կողմից 15.11.2021 թվականին ուղարկված էլեկտրոնային ծանուցումը:

1.4. Պատվիրատուն 19.11.2021 թվականին կայացած հանձնաժողովի նիստում Ընկերության հայտը գնահատել է անբավարար, արձանագրելով այն փաստը, որ առաջարկված շտկումը Ընկերության կողմից չի կատարվել:

1.5. Հանձնաժողովը չի նկատել մեր կողմից թույլ տրված մեկ այլ խախտման մասին, որը թույլ է տրվել անուշադրության պատճառով: Ընկերության ուղարկված հայտում առկա է եղել ևս մեկ անհամապատասխանություն: Ապրանքի տեխնիկական բնութագրում մեր կողմից չի նշվել ապրանքի կոնկրետ բնութագիր, այլ նշվել է «կամ համարժեք», որը հանձնաժողովի կողմից չի արձանագրվել: Այն դեպքում, երբ մենք սպասում էինք մանրամասն նկարագրված անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ ծանուցում, բայց այն չենք ստանում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի «Գնումների կազմակերպման» կարգը հաստատելու մասին 526-Ն որոշման հավելված 1-ով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 26-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն գնահատող հանձնաժողովի անդամը պատասխանատվություն է կրում իր որոշումների, այդ թվում իր կողմից հաստատված փաստաթղթերի, պահանջների, ինչպես նաև գնման ընթացակարգի հաղթողին որոշելու հիմնավորվածության համար:

Կարգի 40-րդ կետի 4-րդ եթակետի համաձայն՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է

հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը.

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից Ականավորված տարբերակը: ՄասնաԱցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: (...):

Սույն իրավական նորմերի վերլուծության արդյունքում պետք է փաստել, որ Օրենսդիրը հայտերի մերժման իրավասություն հանձնաժողովի համար նախատեսել է այն դեպքերում, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ այն ներկայացվել է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառելով միայն այն դեպքերը երբ մասնակցի կողմից ներկայացված հայտում առկա են անհամապատասխանություններ, և որոնք շտկվել են սահմանված ժամկետում: Այսինքն պետք է արձանագրել, որ Օրենսդիրը սահմանելով հայտերի մերժման սպառիչ ցանկ, դրա նկատմամբ սահմանել է նաև բացառություններ, հնարավորություն տալով մասնակիցներին շտկելու իրենց կողմից ներկայացված հայտում առկա անհամապատասխանությունները: Ի դեպ անհամապատասխանությունների վերաբերյալ մասնակիցը պետք է ծանուցվի դրա վերաբերյալ մանրամասն նկարագրությամբ, ինչպես նաև մասնակիցը կրում է պարտականություն իր հերթին անհամապատասխանության շտկկումը կատարել

սահմանված ժամկետում: Այս պայմանների պահպանման պարագայում մասնակցի հայտը գնահատվում է բավարար:

Ինչպես նաև կարևոր հանգամանք է Կարգում նշված մեջբերումը հայտի մերժման վերաբերյալ անհամապատասխանության հիմքով, որը սահմանում է հետևյալը հայտը ենթակա է մերժման հրավերի պահանջների անհամապատասխանության հիմքով, որի վերաբերյալ նոր միայն Օրենսդիրը սահմանել է շտկման հնարավորություն: Այսինքն հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը իրավասու է միայն հրավերի պահանջների անհամապատասխանության դեպքում մեկ օրով կասեցնելու նիստը և մասնակցին այն շտկելու հնարավորություն տալու, հակառակ դեպքում եթե հրավերի պահանջների անհամապատասխանություն առկա չէ, ապա շտկման վերաբերյալ ծանուցումը անհիմն է:

Հետևյալ հանգամանքները համադրելով սույն գործի փաստերի հետ պետք է արձանագրել հետևյալը՝ Հանձնաժողովը հայտերի բացման նիստում ուսումնասիրելով Ընկերության կողմից ներկայացված հայտը, արձանագրել է, որ Ընկերության ներկայացված հայտում առկա անհամապատասխանություն՝ այն է, Դուք դիմել եք ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/2 ծածկագրով էլեկտրոնային աճուրդին: Էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովը ուսումնասիրել է էլեկտրոնային աճուրդի մասնակցության Ձեր Դիմում-Հայտարարությունը, որում նկատվել են հետևյալ թերությունները. «ՆՈԲԻԼԻՍ ԳԲՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից 18-րդ չափաբաժնի մասով լրացված չէ առաջարկվող ապրանքի «ֆիրմային անվանումը», «ապրանքային նշանը» սյունակները, անհրաժեշտ է սյունակները լրացնել: Առաջարկում ենք գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում շտկել նշված անհամապատասխանությունները և ուղղված Դիմում-Հայտարարությունն ուղարկել համակարգի միջոցով:

Պատվիրատուն 19.11.2021 թվականին կայացած հանձնաժողովի նիստում Ընկերության հայտը գնահատել է անբավարար, արձանագրելով այն փաստը, որ առաջարկված շտկումը Ընկերության կողմից չի կատարվել:

Հանձնաժողովը չի նկատել մեր կողմից թույլ տրված մեկ այլ խախտման մասին, որը թույլ է տրվել անուշադրության պատճառով: Ընկերության ուղարկված հայտում առկա է եղել ևս մեկ անհամապատասխանություն: Ապրանքի տեխնիկական բնութագրում մեր կողմից չի նշվել ապրանքի կոնկրետ բնութագիր, այլ նշվել է «կամ համարժեք», որը հանձնաժողովի կողմից չի արձանագրվել: Այն դեպքում, երբ մենք սպասում էինք մանրամասն նկարագրված անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ ծանուցում, բայց այն չենք ստանում:

Գտնում ենք, որ էլեկտրոնային աճուրդի հանձնաժողովը խախտել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները, մասնավորապես՝

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.11.2021 թվականի N 3 արձանագրությամբ մեր հայտը մերժելու համար Հանձնաժողովը չի նկատել մեր կողմից թույլ տրված մեկ այլ խախտման մասին, որը թույլ է տրվել անուշադրության պատճառով: Ընկերության ուղարկված հայտում առկա է եղել ևս մեկ անհամապատասխանություն: Ապրանքի տեխնիկական բնութագրում մեր կողմից չի նշվել ապրանքի կոնկրետ բնութագիր, այլ նշվել է «կամ համարժեք», որը հանձնաժողովի կողմից չի արձանագրվել: Այն դեպքում, երբ մենք սպասում էինք մանրամասն նկարագրված անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ ծանուցում, բայց այն չենք ստանում:

Արդյունքում, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը խախտել է.

1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետով սահմանված պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնման և նրանց միջև մրցակցության խրախուսման սկզբունքը, ինչն էլ իր հերթին հանգեցրել է Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված մասնակցի մասնակցության իրավունքի իրականացման սահմանափակմանը կամ ոչ լիարժեք իրականացմանը:

2. Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Այսպիսով, գտնում ենք մեր հայտը մերժելու մասին որոշումը ոչ իրավաչափ է և չի բխում «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված նորմերից: Այսինքն կարելի է եզրակացնել, որ մի դեպքում առաջարկվող ապրանքի «ֆիրմային անվանումը»,

«ապրանքային նշանը» սյունակների լրացված չլինելը ընդունելի չի, իսկ մյուս դեպքում տեխնիկական բնութագրում սխալմամբ «կամ համարժեք» բառակապակցության նշումը ընդունելի է:

Իսկ եթե ամեն դեպքում պնդվի, որ դա տեխնիկական վրիպակի արդյունք է, ապա «ՆՈԲԻԼԻՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին պետք է կրկին տալ հնարավորություն արձանագրված անհամապատասխանությունները շտկելու համար՝ կիրառելով թիվ 526-Ն որոշման 41 կետը: Ինչը նույնպես հիմք է հանդիսանում դադարեցնելու հանձնաժողովի N 3 արձանագրությամբ կայացված «ՆՈԲԻԼԻՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ հայտը մերժելու մասին որոշումը 18-րդ չափաբաժնի մասով և ևս մեկ հիմք է առաջ գալիս կազմակերպությանը կրկին ծանուցելու և պահանջելու շտկել անհամապատասխանությունը:»:

Վերոգրյալների հիման վրա՝ Ընկերությունը Բողոքներ քննող անձին խնդրել է՝ պարտավորեցնել «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին՝

1. դադարեցնել (վերացնել) 19.11.2021թ.-ի թիվ 5 արձանագրությամբ «Նոբիլիս Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժելու մասին որոշումը,

2. ընդունելու որոշում Ընկերության հայտը բավարար գնահատելու կամ շտկելու վերաբերյալ:

«Նոբիլիս Գրուպ» ՍՊԸ-ն 13.12.2021թ.-ին ներկայացված բողոքի լրացմամբ հայտնել է հետևյալը.

«1. ՀՀ կառավարության 18.05.2017 թվականի «էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգը հաստատելու մասին 534-Ն որոշման հավելված 1-ով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 10-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն եթե առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը գնահատվում է բավարար, ապա վերջինս հայտարարվում է ընտրված մասնակից, իսկ մյուս մասնակիցների հայտերը մերժվում են: Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտն անբավարար գնահատվելու դեպքում գնման ընթացակարգը օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա հայտարարվում է չկայացած:

Պատվիրատուն իր դիրքորոշման մեջ նշել է, որ «Բողոքով ներկայացված նշված պնդումն անհիմն է և նպատակ ունի երկարաձգել Երևանի քաղաքապետարանի կողմից իրականացվող շատ կարևոր ծրագիրը՝ Երևանի ենթակայությամբ մանկապարտեզների կարիքների համար սննդամթերքի ձեռբերումը»:

Պատվիրատուի 25.10.2021 թվականին հայտարարած թիվ «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդը 18-րդ չափաբաժնի մասով հայտարարվել է չկայացած,

քանի որ առաջին տեղը զբաղեցրած մեր Ընկերության հայտը գնահատող հանձնաժողովը գնահատել է անբավարար, արձանագրելով այն փաստը, որ առաջարկված շտկումը Ընկերության կողմից չի կատարվել:

Փաստորեն, անգամ այս պարզ և հստակ իրավիճակում Պատվիրատուն դիմում է սադրանքի և անհիմն մեղադրում մեր Ընկերությանը: Ինչ է նշանակում «նպատակ ունի երկարաձգել Երևանի քաղաքապետարանի կողմից իրականացվող շատ կարևոր ծրագիրը Երևանի ենթակայությամբ մանկապարտեզների կարիքների համար սննդամթերքի ձեռբերումը», երբ 18-րդ չափաբաժինը հայտարարվել է չկայացած: Ինչպես կարող է մեր կողմից ներկայացված բողոքը երկարաձգել մանկապարտեզների սննդամթերքի ձեռբերումը, երբ բողոքը վերաբերում է միայն չկայացած հայտարարված չափաբաժնին, մեղմ ասած անհասկանալի է:

Ըստ մեզ, յուրաքանչյուր պատվիրատուի շահերից է բխում օրինավոր և իրավունք չչարաշահող վարքագիծը, իսկ ներկայացված բողոքի բավարարմամբ Երևանի ենթակայությամբ մանկապարտեզների կարիքների համար սննդամթերքի ձեռբերումը կկատարվի ավելի արագ, քանի որ նոր աճուրդ հայտարարելու կարիք չի լինի:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք ցանկանում հրավիրել, որ «ՆՈԲԻԼԻՍ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությունը փաստացի վիճարկում է ընթացակարգի 18-րդ չափաբաժնի մասով N 3 արձանագրությամբ հանձնաժողովի կայացրած Ընկերության հայտում արձանագրված անհամապատասխանությունները շտկելու ու N 4 արձանագրությամբ կայացրած մեր Ընկերության հայտը մերժելու մասին որոշումները, այլ ոչ թե ամբողջ աճուրդը:

2. «կամ համարժեք» հղման մասին Պատվիրատուի կներկայացված պատասխանը նույնպես սադրանք է, քանի որ հղումը վերաբերում է գնման առարկայի տեխնիկական բնութագրին ու այդ ԳՕՍՏ-ի համարժեքությամբ ներկայացված այլ ԳՕՍՏ-ի ցուցանիշները միչև պայմանագրի կատարման փուլը ևս պետք է գնահատվեն Պատվիրատուի կողմից, այդ իսկ պատճառով ԳՕՍՏ-ի «կամ համարժեք» հղման բառակապացության նշումը գնահատող հանձնաժողովի կողմից պետք է դիտարկվեր որպես անհամապատասխանություն:

Ըստ Պատվիրատուի տրամաբանության, մեր Ընկերությունը կարող էր չնշել որևիցե ԳՕՍՏ-ի տվյալ ու նշել միայն համարժեք: Բնականաբար դա չի կարող բխել իրականությունից:

Այսպիսով, գտնում ենք մեր հայտը մերժելու մասին որոշումը ոչ իրավաչափ է և չի բխում «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված նորմերից: Այսինքն կարելի է

եզրակացնել, որ մի դեպքում առաջարկվող ապրանքի «ֆիրմային անվանումը», «ապրանքային նշանը» սյունակների լրացված չլինելը ընդունելի չի, իսկ մյուս դեպքում տեխնիկական բնութագրում սխալմամբ «կամ համարժեք» բառակապացության նշումը ընդունելի է:

Իսկ եթե ամեն դեպքում պնդվի, որ դա տեխնիկական վրիպակի արդյունք է, ապա «ՆՈԲԻԼԻՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին պետք է կրկին տալ հնարավորություն արձանագրված անհամապատասխանությունները շտկելու համար՝ կիրառելով թիվ 526-Ն որոշման 41 կետը: Ինչը նույնպես հիմք է հանդիսանում դադարեցնելու հանձնաժողովի N 3 արձանագրությամբ կայացված «ՆՈԲԻԼԻՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ հայտը մերժելու մասին որոշումը 18-րդ չափաբաժնի մասով և ևս մեկ հիմք է առաջ գալիս կազմակերպությանը կրկին ծանուցելու և պահանջելու շտկել անհամապատասխանությունը:»:

3. <u>Երևանի քաղաքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 01.12.2021թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/19660-2021 գրությամբ դիմել է Երևանի քաղաքապետարանին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Նոբիլիս Գրուպ» ՍՊԸ-ի կողմից 30.11.2021թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին:

Պատվիրատուն 03.12.2021թ.-ի թիվ 02/61-30218 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/2» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում Ընկերության կողմից ներկայացված հայտում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է անհամապատասխանություն հրավերի պահանջների նկատմամբ, այն է՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը ֆայլում 18-րդ չաւիաբաժնի մասով չի լրացվել ապրանքի հրավերով պահանջվող «ֆիրմային անվանումը» և «ապրանքային նշանը» սյունակները: Գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետև՝ Կարգ) 41-րդ կետի

պահանջներով, 15.11.2021թ. ծանուցել է Ընկերությանը սահմանված ժամկետում շտկել անհամապատասխանությունը միաժամանակ էլեկտրոնային աճուրդ համակարգում նույն օրը կցվել է նաև գնահատող հանձնաժողովի թիվ 3 արձանագրությունը:

Ընկերության կողմից սահմանված ժամկետում վերը նշված անհամապատասխանությունը չի շտկվել:

Գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով Կարգի 42-րդ կետով Ընկերության հայտը մերժել է, հաշվի առնելով, որ համաձայն հրավերի 4.3 կետի 3-րդ ենթակետի, մասնակիցները պարտավոր են ներկայացնել իրենց կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, արտադրողի անվանումը՝ ապրանքի ամբողջական նկարագիրը:

Վերոգրյալով պայմանավորված գտնում եմ, որ գնահատող հանձնաժողովի կողմից կայացված որոշումն իրավաչափ է, իսկ ինչ վերաբերում է բողոքով ներկայացված այն պնդմանը, որ Ընկերության հայտում առկա անհամապատասխանությունը մանրամասն չի նկարագրվել՝ անհիմն է, քանի որ գնահատող հանձնաժողովի թիվ 3 արձանագրության 1.1 կետով հստակ նշել է, որ «ՆՈԲԻԼԻՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից 18-րդ չափաբաժնի մասով լրացված չէ առաջարկվող ապրանքի «ֆիրմային անվանումը», «ապրանքային նշանը» սյունակները, անհրաժեշտ է սյունակները լրացնել»:

Անդրադառնալով բողոքի 1.5 կետով ներկայացված դիտարկմանը, որ գնահատող հանձնաժողովի չի «նկատել» ընկերության կողմից թույլ տրված մեկ այլ խախտման մասին, այն է՝ ապրանքի տեխնիկական բնութագրում չի նշվել գնման առարկայի կոնկրետ բնութագիր, այլ նշվել է «կամ համարժեք» հղումը, ապա տեղեկացնում եմ, որ մասնակցի կողմից ներկայացված տեխնիկական բնութագիրը դա պատվիրատուի կողմից սահմանված նույնական տեխնիկական բնութագիրն է, որում պատվիրատուի կողմից նախատեսված «կամ համարժեք» հղումը վերաբերում է, ոչ թե գնման առարկայի տեխնիկական բնութագրին այլ՝ նշված ԳՕՍՏ-ի ցուցանիշներին, որի համարժեքությամբ ներկայացված այլ ԳՕՍՏ-ի ցուցանիշները պայմանագրի կատարման փուլում ևս ունդունելի կլինի պատվիրատուի համար, այդ իսկ պատճառով այն գնահատող հանձնաժողովի կողմից չի դիտվել որպես անհամապատասխանություն: Բողոքով ներկայացված նշված պնդումն անհիմն է և նպատակ ունի երակարձգել Երևանի քաղաքապետարանի կողմից իրականացվող շատ կարևոր ծրագիրը՝ Երևանի ենթակայությամբ մանակապարտեզների կարիքների համար սննդամթերքի ձեռբերումը:»:

4. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2021/110 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. Երևանի քաղաքապետարանի կողմից Երևան քաղաքի ենթակայության մանկապարտեզների կարիքների համար կենտրոնացված կարգով սննդամթերքի ձեռքբերման նպատակով 25.10.2021թ.-ին հայտարարվել է «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգի հայտերի ներկայացման և հայտերի բացման վերջնաժամկետ է սահմանվել 10.11.2021թ.-ի ժամը 11:00 ներառյալ, որին ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել նաև «Նոբիլիս Գրուպ» ՍՊԸ-ն:

iii. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 15.11.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Նոբիլիս Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ 18-րդ չափաբաժնի մասով լրացված չի եղել առաջարկվող ապրանքի «ֆիրմային անվանումը» և «ապրանքային նշանը» սյունակները:

iv. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, որոշել է մեկ /1/ աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատման նիստը և ծանուցել «Նոբիլիս Գրուպ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

v. Հանձնաժողովի 19.11.2021թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Նոբիլիս Գրուպ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում չի ներկայացվել շտկված տարբերակը, ինչով պայմանավորված, Հանձնաժողովը որոշել է վերջինիս կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար (18-րդ չափաբաժնի մասով):

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ «Նոբիլիս Գրուպ»

ՍՊԸ-ի կողմից 30.11.2021թ.-ին ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա բավարարման ամբողջությամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ հոդվածների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Զարգացնելով վերոգրյալները՝ Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակը կլիներ ձևական, եթե դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի կազմակերպումը չլիներ տնտեսող, արդյունավետ և օգտավետ:

Այն է՝ ընթացակարգերի կազմակերպումը պետք է լինի՝

1. տնտեսող, այսինքն՝ նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար նախատեսված ռեսուրսների, ֆինանսական միջոցների մինիմալացմամբ՝ պահպանելով նախապես սահմանված որակը:

2. արդյունավետ, այսինքն՝ արդյունքի կամ նպատակի մասով պլանավորված և փաստացի վիճակների համեմատությունը: Նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար օգտագործված նյութական և ոչ նյութական միջոցների համարժեքությունը ձեռք բերված արդյունքին, երբ ապահովվում է կատարված ծախսի և Պատվիրատուի համար դրա օգտակարության միջև պատշաճ հարաբերակցությունը:

3. Օգտավետ՝ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակով դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի արդյունքի կամ նպատակի առավելագույն մակարդակի ապահովում:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել նաև, որ իրավունքի սկզբունքները հիմնարար գաղափարներ են, որոնք արտահայտում են հասարակական կյանքի օբյեկտիվ օրինաչափությունները, ուղղակի կամ անուղղակի ամրագրվում են իրավական նորմերում, իրավական համակարգի հենասյունն են, կոչված են կարգավորելու հասարակական հարաբերությունները, ունեն համապարտադիրության հատկանիշ:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է:

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 18.05.2017թ.-ի թիվ 534-Ն հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 10-րդ կետի համաձայն՝ էլեկտրոնային աճուրդով գնումների կատարման և ընտրված մասնակցի հետ պայմանագրի կնքման ժամանակ գործում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգով նախատեսված կարգավորումները.....:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու գրավոր դիմում՝ նշելով էլեկտրոնային փոստի հասցեն, հարկ վճարողի հաշվառման համարը, գործունեության հասցեն և հեռախոսահամարը,

բ. իր կողմից հաստատված հավաստում՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր համապատասխանության մասին,

գ. ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր),

թ. «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող իրավաբանական անձի դեպքում՝ հղում գնումների գործընթացին մասնակցող իրավաբանական անձի իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջին, իսկ այլ իրավաբանական անձանց դեպքում՝ գնումների գործընթացին մասնակցող իրավաբանական

անձի իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 60.3-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա սահմանված ձևով և կարգով: Ընդ որում, եթե մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից, ապա սույն պարբերությամբ նախատեսված տեղեկությունը պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հետ միաժամանակ հրապարակվում է տեղեկագրում:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Երևանի քաղաքապետարանի կողմից Երևան քաղաքի ենթակայության մանկապարտեզների կարիքների համար կենտրոնացված կարգով սննդամթերքի ձեռքբերման նպատակով 25.10.2021թ.-ին հայտարարված «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/2» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 4.3-րդ կետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝

1) իր կողմից հաստատված՝ սույն հրավերի 2-րդ մասի 2.1 կետով նախատեսված դիմում-հայտարարություն՝ համաձայն հավելված 1-ի՝ նշելով հարկ վճարողի հաշվառման համարը, գործունեության հասցեն և հեռախոսահամարը, որը ներառում է՝

ա) հավաստում սույն հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին.

ե) իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ համաձայն հավելված 1.2-ի կամ 1.3-ի (ներկայացված հայտարարագրի ձևին համապատասխան); Ընդ որում՝

- 1.2 հավելվածը ներկայացնում է այն մասնակիցը, որը «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքի հիման վրա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող իրավաբանական անձ չէ կամ այդպիսի իրավաբանական անձ է սակայն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ պարտավոր չէր իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում գրանցել իր իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունները:

- 1.3 հավելվածը ներկայացնում է այն մասնակիցը, որը «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքի հիման վրա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող իրավաբանական անձ է և հայտը ներկայացնելու օրվա դրությամբ սահմանված կարգով պետք է իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում գրանցված լիներ իր իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունները.

- իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր չի ներկայացվում, եթե մասնակիցը անհատ ձեռնարկատեր կամ ֆիզիկական անձ է.

- դիմում հայտարարության 2-րդ կետի 3-րդ պարբերությամբ նախատեսված աղյուսակը չի լրացվում. Եթե մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից, ապա սույն պարբերությամբ նախատեսված հավելվածը, որը հայտերը բացելուց հետո ավտոմատ եղանակով հրապարակվում է համակարգում, պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հետ միաժամանակ հրապարակվում է նաև տեղեկագրում.

Հրավերի 8.11-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքում սույն հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրելու դեպքում, ներառյալ երբ ՀՀ ռեզիդենտ հանդիսանալու պայմաններում մասնակցի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի

քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտի գնահատման ընթացքում հայտնաբերված բոլոր անհամապատասխանությունները:

Եթե սույն կետով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը համակարգի միջոցով շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար և մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում, ներառյալ եթե սույն հրավերով նախատեսված է հայտի ապահովման ներկայացման պահանջ և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտով ապահովումը ներկայացրել է բանկային երաշխիքի ձևով, սակայն սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացրել դրա բնօրինակը, իսկ գնման ընթացակարգը Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա հայտարարվում է չկայացած:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված

գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է նաև, որ Կարգի 41-րդ կետն ուղղակիորեն սահմանում է և այդ կետի իմաստից բխում է, որ հայտում ներառվող փաստաթղթերում արձանագրված՝ շտկման ենթակա անհամապատասխանություններն ենթակա են շտկման՝ հանձնաժողովի քարտուղարի կողմից Մասնակցին էլեկտրոնային եղանակով ուղարկված ծանուցման ստացման պահից հաշված մեկ աշխատանքային օրյա ժամկետում:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելվել նաև, որ ստանձնած պարտավորությունների (այդ թվում՝ ընթացակարգի և պայմանագրի) խախտման հիմքերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: Օբյեկտիվ հիմքերի մեջ կարելի է դասել ֆորսմաժորային դեպքերը՝ տարերային աղետները, ինչպես նաև արտակարգ իրավիճակը և նմանատիպ այլ՝ անձանց կամքից անկախ հիմքերով առաջացող պատճառները: Սուբյեկտիվ գործոնը պայմանավորված է անմիջականորեն տվյալ անձի հետ կապված և գործնականում ավելի երկար ժամանակ պահանջող ողջամիտ խնդիրների լուծմամբ, առանց որի անհնար է ստանձնած պարտավորությունների կատարումը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ բոլոր դեպքերում էլ, բացի ֆորսմաժորային իրավիճակներից, ստանձնած պարտավորությունների խախտման համար մեղքի բացակայության փաստը հաստատված համարելու համար ընդհանուր կանոնն այն է, որ անձը պարտավոր է ապացուցել, որ օրենքով սահմանված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ ժամկետի ընթացքում ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ այդ պարտավորությունների պատշաճ կատարումն իրականացնելու ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ պատճառներով խախտել է գնման ընթացակարգով կամ պայմանագրով ստանձնած պարտավորությունը(ները): Օբյեկտիվ և սուբյեկտիվ հիմքերի վերաբերյալ նմանատիպ դիրքորոշում է հայտնել ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում *(տե՛ս, «Հայբիզնեսբանկ» ՍՊԸ-ն*

ընդդեմ «Միլլար» ՍՊԸ-ի թիվ ԵԿԴ/2628/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2014 թվականի որոշումը):

Օրենսդիրը, արձանագրված անհամապատասխանությունների շտկում ներկայացնելու պարտականության կատարման համար սահմանելով այդպիսի պահանջ ստանալու պահից հաշված 1 աշխատանքային օրյա ժամկետ, գնման գործընթացի մասնակիցներին ընձեռել է այն օբյեկտիվ ժամանակահատվածը, երբ վերջիններս կարող են իրացնել Օրենքով և Կարգով սահմանված՝ արձանագրված անհամապատասխանությունների շտկելու պարտավորությունը: Ուստի սահմանված պատասխանատվության միջոցները կարող են ի հայտ գալ միայն սահմանված ժամկետի ավարտմամբ կամ մասնակցի կողմից այնպիսի գործողություններ կատարելու արդյունքում, որոնք վկայում են վերջինիս կողմից արձանագրված անհամապատասխանությունները շտկելուց հրաժարվելու մասին:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Կարգի 41-րդ և Հրավերի 8.11-րդ կետերի դրույթները իմպերատիվ (պարտադիր) կերպով սահմանում են հանձնաժողովի քարտուղարի գործողությունները, որոնք պետք է իրականացվեն մասնակցի հայտում արձանագրված անհամապատասխանությունների դեպքում, այն է՝ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը անհամապատասխանությունների մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը, ինչպես նաև մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Օրենքի 34-րդ հոդվածի և Կարգի 41-րդ կետի դրույթների իմաստից բխում է, որ մասնակցի ներկայացրած հայտը գնահատվում է բավարար այն դեպքում, երբ այն համապատասխանում է հրավերով նախատեսված պայմաններին:

Հարկ է նկատել նաև, որ Կարգի 41-րդ և Հրավերի 8.11-րդ կետերի դրույթների վրա հասնելու (կիրառելու) հանգամանքը գործադիրը պայմանավորել է հրավերի պահանջների նկատմամբ մասնակցի հայտում արձանագրված անհամապատասխանությունների հանգամանքով: Այլ կերպ ասած՝ նախ անհրաժեշտ է արձանագրել անհամապատասխանություն, ապա դրանից հետո նոր առաջարկել կատարելու շտկում:

Ըստ այդմ՝ Պատվիրատուն և Հանձնաժողովը, գնման գործընթացի մասնակիցների հայտերի գնահատումն իրականացնելիս, չպետք է վերջիններին ծանրաբեռնեն այնպիսի պարտականություններով, որոնք ուղղված են ձևական պահանջների պահպանմանը, կամ,

առավել ևս, մերժեն ներկայացված հայտերը, եթե մասնակիցների վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են:

Ինչպես Օրենքի իմաստից է բխում, որ գնման գործընթացի շրջանակներում ներկայացված հայտերի գնահատումը պետք է ուղղված լինի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով հետապնդվող նպատակին, և դրան հասնելու միջոցները պետք է լինեն պիտանի, անհրաժեշտ և չափավոր:

Միաժամանակ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ ծանուցման էությունը կայանում է և ուղղված է Մասնակցին որոշակի հանգամանքների վերաբերյալ իրազեկելուն, տեղեկատվություն տրամադրելուն և բովանդակության ամբողջությանը հասու դարձնելուն:

Բողոքներ քննող անձը, ամփոփելով վերոգրյալ դիրքորոշումը, եզրահանգում է նաև, որ թեև գործադիրը հստակ չի սահմանում, թե ծանուցումն ինչպիսի՞ բովանդակություն պետք է պարունակի, սակայն միանշանակ է այն, որ ծանուցումը պետք է լինի այնպիսին, որ հնարավորություն կտա իրապես պարզելու դրանում պարունակվող հանգամանքը (ները), և մասնակցի կողմից ծանուցման հետ ծանոթանալու իրական հնարավորություն ստեղծվի: Այսինքն՝ մասնակիցների համար ծանուցումն իրական հնարավորություն պետք է ապահովի տիրապետելու դրա բովանդակությանը: Ընդ որում, հարկ է նկատել, որ շտկման մասին ծանուցումը պետք է պարունակի նաև տվյալներ շտկման ենթակա փաստաթղթերի ներկայացման ձևի և կարգի վերաբերյալ (կոնտակտային տվյալներ, էլեկտրոնային փոստի հասցե, որին պետք է մասնակիցն ուղարկի շտկված փաստաթղթերը կամ ներկայացման եղանակը և այլն): Ինչպես նաև այլ անհրաժեշտ տեղեկություններ, որոնք հնարավորություն կընձեռեն ծանուցումը (արձանագրությունը) ստացած մասնակցին, ծանուցմամբ նշված բովանդակությանը ծանոթանալուց հետո, շտկել անհամապատասխանությունները և ներկայացնել այն ձևով, ինչպես նշված է ծանուցմամբ կամ ներկայացված արձանագրությամբ:

Վերոնշյալ պարտադիր վավերապայմանների միաժամանակյա առկայության դեպքում է հնարավոր միայն փաստել՝ ծանուցման նպատակի լիարժեք իրականացման հանգամանքի մասին:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Երևանի քաղաքապետարանի կողմից Երևան քաղաքի ենթակայության մանկապարտեզների կարիքների համար կենտրոնացված կարգով սննդամթերքի ձեռքբերման նպատակով 25.10.2021թ.-ին հայտարարված «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի

15.11.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Նոբիլիս Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ 18-րդ չափաբաժնի մասով լրացված չի եղել առաջարկվող ապրանքի «ֆիրմային անվանումը» և «ապրանքային նշանը» սյունակները, ինչով պայմանավորված Հանձնաժողովը որոշել է մեկ /1/ աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատման նիստը և ծանուցել «Նոբիլիս Գրուպ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Սակայն Հանձնաժողովի 19.11.2021թ.-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Նոբիլիս Գրուպ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում չի ներկայացվել շտկված տարբերակը, ինչով պայմանավորված, Հանձնաժողովը որոշել է վերջինիս կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար (18-րդ չափաբաժնի մասով):

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման, դրանք համադրելով Ընկերության բողոքով ներկայացրած հանգամանքներին, ուսումնասիրելով Հանձնաժողովի 15.11.2021թ.-ի կայացված նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրված անհամապատասխանություններն, ինչպես նաև Ընկերության կողմից 18-րդ չափաբաժնի մասով ներկայացված տեխնիկական բնութագիրը՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ Հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանություններից զատ, «Նոբիլիս Գրուպ» ՍՊԸ-ի կողմից թույլ մեկ այլ անհամապատասխանություն, այն է՝ նշվել է «կամ համարժեք» հղումը (բառակապակցությունը), ինչը վերաբերել է ապրանքի տեխնիկական բնութագրին, որը նույնպես Հանձնաժողովի կողմից պետք է գնահատվեր որպես անհստակություն, ըստ այդմ՝ հայտում առկա անհամապատասխանություն:

Այլ կերպ ասած՝ Հրավերով պահանջվել է հստակ նշել պահանջվող ԳՕՍ-ը, սակայն Ընկերության կողմից նշվել է ԳՕՍ «կամ համարժեք», որը, նույնպես, ելնելով Հանձնաժողովի կողմից թիվ 3 արձանագրությամբ արձանագրված անհամապատասխանությունների տրամաբանությունից, ենթակա էր արձանագրման և շտկման մասին պահանջի ներկայացման, ինչի արդյունքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից թույլ է տրվել Կարգի 41-րդ կետի և Հրավերի 8.11-րդ կետի դրույթների խախտում:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Նոբիլիս Գրուպ» ՍՊԸ-ի կողմից բողոքով բերված փաստերն ու հանգամանքները սույն որոշմամբ բերված իրավական ու փաստական հանգամանքների և արված վերլուծությունների ամբողջությամբ հիմնավոր են, ուստի գնահատող հանձնաժողովի

կողմից «Նոբիլիս Գրուպ» ՍՊԸ-ի հայտն անբավարար գնահատելու մասին կայացված որոշումն իրավաչափ չէ՝ որպիսի պայմաններում Հանձնաժողովի կողմից չի ապահովվել Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի դրույթներով սահմանված սկզբունքների կիրառումը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Նոբիլիս Գրուպ» ՍՊԸ-ի կողմից 30.11.2021թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2021/110 ծածկագրով բողոքը բավարարել ամբողջությամբ:

Պարտավորեցնել «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին՝

- դադարեցնել «Նոբիլիս Գրուպ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին կայացված որոշումը:
- ընդունել շտկման ծանուցում ուղարկելու մասին որոշում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**